

**ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ «ՏԱՂ ՎԱՐԴԱՎԱՌԻ» ԱՂԵՐՄՆԵՐԸ ՄՈՎՍԵՍ  
ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՎԱՐԴԱՎԱՌԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ» ՆԵՐՔՈՂԻ ՀԵՏ**

**Հ. Է. ՄԿՐՏՉՅԱՆ**

*ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի  
Հայոց լեզու և գրականություն բաժնի  
մագիստրատուրայի շրջանավարտ,  
ԳՊՀ հանրության հետ կապերի  
և լրատվության բաժնի մասնագետ*

Յուրաքանչյուր ազգ իր պատմության մեջ ունի տոներ ու ավանդույթներ, որոնք սերնդեսերունդ փոխանցվել են դեռևս վաղ դարերից և հասել են մինչև մեր օրերը: Հայ ժողովրդի ազգային տոնադարանում ևս քիչ չեն հետաքրքիր ու յուրօրինակ տոն-ավանդույթները, որոնք գալիս են հազարամյակների խորքից:

Այդօրինակ տոներից է Քրիստոսի Պայծառակերպության կամ Կերպարանափոխման տոնը: Հայոց եկեղեցու տոնացույցում այն հինգ տաղավար տոներից մեկն է, որը նշվում է Սուրբ Զատիկից 98 օր հետո՝ հունիսի 28-ից օգոստոսի 1-ն ընկած միջակայքում:

Սակայն համազգային հիշյալ տոնի արմատները հասնում են մինչև հեթանոսական ժամանակներ: Տոնը հասարակությանն ավելի հայտնի է որպես Վարդավառ:

Վարդավառը հին արիական տոներից է՝ նվիրված ուժի, զորության ու հաղթանակի աստված Վահագնի սիրեցյալ Աստղիկին՝ սիրո ու զեղեցկության դիցուհուն, և կապված է պատմական Հայաստանում նշվող նավասարդյան աշխարհախումբ տոնակատարության հետ:

Ժողովրդական ծիսակարգի համաձայն՝ Վարդավառի տոնակատարությունների ընթացքում մարդիկ վարդեր էին փնջում ու նվիրում, աղավճիներ էին երկինք բաց թողնում, մատաղ անում, խնձորի պաս պահում և այլն, սակայն Վարդավառի բուն արարողությունը եղել և մնում է միմյանց վրա ջուր ցողելը, որը, որպես կայուն սովորույթ, պահպանվել և հասել է մինչև մեր օրերը, և Վարդավառ ասելով՝ մարդիկ հաճախ հասկանում են հենց իրար վրա ջուր լցնելը:

Ըստ որոշ աղբյուրների՝ «վարդավառ» բառը ստուգաբանվում է՝ ելնելով հենց հիշյալ արարողակարգից. բառն առաջացել է «vard»՝ ջուր և «arr»՝ լվանալ, ջուր լցնել բառերից:

Իսկ երբ չորրորդ դարի սկզբում ընդունվեց քրիստոնեական կրոնը, ամենայն հեթանոսական մերժվեց քրիստոնյա հոգևոր հայրերի կողմից՝ այդ պահանջը տարածելով նաև ժողովրդի վրա: Սակայն ինքնին հասկանալի է, որ քրիստոնեության մուտքը չէր կարող վերացնել ժողովրդի մեջ արմատացած ու դարեդար փոխանցված հեթանոսական մի շարք ավանդույթներ, այդ իսկ պատճառով ժողովրդական շատ տոներ պահպանվեցին՝ դրանց որոշ չափով տալով նոր բովանդակություն: Ժողովրդական Վարդավառը միացավ քրիստոնեական Պայծառակերպության տոնին՝ ոչ միայն հոգևոր վերափնաստավորման ենթարկելով Վարդավառի հանդիսությունները, այլև մեծապես ազդվելով ժողովրդական այս տոնից:

Այսպես, Վարդավառը, որը Աստղիկի տոնն էր համարվում, վերափոխվեց Զիսուս Քրիստոսի պայծառակերպության կամ այլակերպության տոնի:

Ահա թե այս կապակցությամբ իր «Յուշիկ հայրենյաց հայոց» գրքում ինչ է գրում 19-րդ դարի գրող, պատմաբան Ղևոնդ Ալիշանը. «Նավասարդյան տոներ. աստվածային պահպանության տոներ, քաջ նախնիների հիշատակ, կտրիճների մրցումներ, հասարակության խաղեր եւ վայելքներ, որոնք կատարեցին ավելի քան 3000 տարի մեր աշխարհի երջանիկ նախնիները, թնդացին, դոփեցին Բագրեւանդի տափարակներում եւ բլուրների վրա, մինչեւ որ ծածկվեցին դրանց տակ: Իսկ երբ Զայկի եւ Վահագնի օրերի խորհրդակատար քրմապետներին փոխարինելու եկան խաչապսակ քահանայապետները, մեհյանների վրա եկեղեցիներ կանգնեցրին, բայց դրանց չորս կողմը եւ դուրսը մնաց, բնությունն իր կերպարանքը չփոխեց, ազգն իր հանդեսները չփոխեց, այլ տոները սրբացրեց եւ դիցերի փոխարեն նվիրեց ճշմարիտ աստծուն եւ նրա նահատակներին»:

Տոնի վերաբերյալ հիշատակություններ կան դեռևս հայ գրականության ոսկեդարյան շրջափուլից: Թեմային ծոնված տողեր ունեն Մովսես Խորենացին, Եղիշեն, Մովսես Սյունեցին, Գրիգոր Նարեկացին, Զովհաննես Երզնկացին և այլք, սակայն (եւնելով աշխատանքի բուն նպատակից) հիշյալ հեղինակներից առավել հատկանշական է Պատմահոր և հայ Վերածննդի գրականության հիմնադրի անդրադարձը թեմային:

Եթե համեմատական զուգահեռներ անցկացնենք Մովսես Խորենացու «Վարդավառի խորհրդի մասին» ներբողի և «Տաղ Վարդավառի» քերթվածի միջև, ապա մեր առջև կբացվի հետևյալ պատկերը.

Նարեկացին Վարդավառը նկարագրում է այլաբանորեն՝ համապատասխան տեսարանները շաղախելով բնության նկարագրություններով: Որոշակի դեպքերում այդ այլաբանական նկարագրությունները հասնում են այն աստի-

ճանի, որ ամբողջապես ստվերվում է ստեղծագործության կրոնական իմաստը, դառնում լուի ձև՝ ընթերցողին ներկայանալով որպես բնության հրաշալի պատկերներ:

Ըստ Ավետարանի՝ Քրիստոսը Թաբոր լեռան վրա հայտնվել է արևի պես պայծառ դեմքով և ճերմակափայլ զգեստներով: Ահա թե ինչպես է Նարեկացին պատկերում այդ տեսարանը.

Գոհար վարդն վառ առեալ  
ի վեհից վարսիցն արփենից:  
Ի վեր ի վերայ վարսից  
ծավալէր ծաղիկ ծովային:  
Ի համատարած ծովէն  
պղպջէր գոյնն այն ծաղկին,  
Երփին երփնունակ ծաղկին  
շողշողէր պտուղն ի ճղին:  
Քրքում վակասիր պտուղն  
սնանէր խուռն տերևով.<sup>1</sup>

Առաջին հայացքից՝ մեջբերված հատվածը հիշեցնում է գեղեցիկ և գուճազեղ բնության տեսարան, այնինչ այստեղ հեղինակը բնության երևույթների միջոցով, այսինքն՝ այլաբանորեն, նկարագրում է Քրիստոսի պայծառակերպությունը:

Եթե ուշադիր ընթերցենք այս տաղը, ապա կնկատենք, որ ողջ տեքստի մեջ և ոչ մի կրոնական երանգավորում չկա, բացի վերջին երկու տողից.

Փառք Հօր և Որդւոյն յաւետ,  
սուրբ Հոգւոյն այժմ և յաւիտեանս:<sup>2</sup>

Այս առիթով գրականագետ Մկրյանն ասել է. «Ամենից առաջ՝ եթե ձևական նշանակություն ունեցող վերջին տողերը հանվեն՝ տաղում կրոնական որևէ բան հիշեցնող ոչինչ չի մնա: Չմայած «Վարդավառի» տաղ է կոչվում,

---

<sup>1</sup> Գրիգոր Նարեկացի, Տաղեր, Երևան, 1991, էջ 30:

*Գոհար վարդն էր շղարշ առել  
Արփիական վեհ վարսերից.  
Ծավալվում էր հուսկ վերևում, վարսերից վեր,  
Ծաղկածիծաղ ծովն երկնային:  
Եվ այդ ծովից համատարած  
Պղպջում էր գոյնն այն ծաղկի երփնափողփող.  
Իսկ ծյուղերին հուրհրատում էին հասած  
Պտուղները քրքումնաթույր:*

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 30:

*Փառք Հօր, Որդւոյն և սուրբ Հոգւոյն  
Այժմ և միշտ հավիտյանս հավիտենից:*

բայց ոչ նկարագրվում է Վարդավառի տոնը և ոչ էլ դավանաբանական խորհրդածությունն արվում այդ տոնի շուրջը: Այս բանաստեղծությունը մի հոյակապ ամբողջություն է, որտեղ շոշափելի աշխարհն է՝ ծաղիկների ու լույսի գեղեցկության մեջ կենդանի կերպով զգացված»<sup>3</sup>:

Այլ է մոտեցումը Մովսես Խորենացու «Վարդավառի խորհրդի մասին» ճառում: Ի տարբերություն Նարեկացու՝ Խորենացին իր երկում մեկնում է Վարդավառի տոնի խորհուրդը: Վարդավառը հոգևոր ցնծություն է առաջացնում շուրջբոլորը: Տոնի գովեստն են հռչակում ոչ միայն «բանական բնությունը»<sup>4</sup> և «առաջամիտ ու մաքուր հրեշտակները»<sup>4</sup>, այլև գրեթե բոլոր տարերքները, որոնք «պայծառակերպված հրաշագարդուն են նրա փառքը»<sup>5</sup>:

Վարդավառը պատկերվում է որպես Քրիստոսի Գալստյան փայլում, որի ընթացքում «երկինքն ու երկիրը նորոգվում են»<sup>6</sup>, բնությունը փառքով է պսակում այս տոնը, իսկ աշխարհը ջահավառվում է վճիտ ու մաքուր լույսով:

Խորենացին գովերգում է կենդանի շողարծակ բնությունը՝ միաժամանակ այդ ամենը ներկայացնելով հավատի լույսի ներքո. «Իսկ հավատքի բարձրացրած խորանը, երկնքի նման կամարածն շրջապատելով հավատացյալներին, անսովեր Լույսի անապական ճառագայթն է բոցափայլեցնում մեր բանական բնության հոգևոր աշխարհում»<sup>7</sup>:

Քրիստոնեական գրականության մեջ ճառագայթն Աստծո խորհրդանիշն է: «Իսկ հավատքի լույսի արմատն ու աղբյուրը՝ մեր բնության երկնքով մեկ բարեբանյալ պտուղ Աստվածածինը, իր կուսության մաքրապայծառ լույսով, և իր հետ վառած մեծաջահ սուրբերին՝ Երրորդության լույսի հոգևոր աստղերին, տիեզերքով մեկ շրջափայլում է որպես հրաշապայծառ ճառագայթ»<sup>8</sup>:

Քրիստոսը՝ Աստծո որդին, ով համեմատվում է գոհար վարդի հետ, իր պայծառակերպությունն է ստանում արևի վեհ շողերից՝ Հայր Աստծո լույսից, և ծավալվելով ու հասունանալով որպես շողշողուն պտուղ՝ տարածում է իր լույսն ու բարիքները՝ ճշմարիտ հավատը: Իսկ այդ հասուն պտուղը սնող տերևը համեմատվում է Տիրոջ տավղի հետ, որ երգում էր Դավիթ հրաշալին: Գրականագետ Հրաչյա Թամրազյանը Դավթի մեջ տեսնում է բանաստեղծին, ով բնության արարման հրաշքն է երգում: «Բնությունը Աստծո տավիղը՝ քնարն է: Աստծո տավիղն է նաև բանաստեղծը, որ տարփողում է աստվածա-

<sup>3</sup> Մկրյան Մ., Հայ հին գրականության պատմություն (5-10-րդ դդ.), Երևան, 1976, էջ 449:

<sup>4</sup> Մովսես Խորենացի, Աստվածաբանական երկեր, Ս. Էջմիածին, 2007, էջ 27:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>7</sup> Նշվ. աշխատ., էջ 28:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 28:

յին բնությունը»<sup>9</sup>: Հեղինակը գեղեցիկ և պատկերավոր կերպով նկարագրում է, թե ինչպես վարդ-Քրիստոսի լույսից ու ջերմությունից կենդանություն է առնում ողջ բնությունը: Բնության ցնծության տեսարանները երկու հեղինակների մոտ նույնամանակ են:

Ի փունջ խումներամ վարդից  
գոյնզգոյն ծաղկունք ծաղկեցան:  
Այդ սօս ու տօսախ ծառերդ  
վարդագոյն ոստս արծակեցին:  
Այդ նոճ ու բողբոջ արօսդ  
զարդ առեալ վարդն շուշանին.  
Շուշանն շողեր հովտին,  
շողշողեր դէմ արեգականն.<sup>10</sup>

«Այժմ ամպերը, տերունական հրամանին սպասարկելով, արևելքից՝ լուսատեսակները հյուսիսից՝ ոսկեճաճանչները, իրար վրա կուտակված միագույն թանձրության մեջ, փայլակնացայտ, որոտընդոստ, ցողաբուխ առատությամբ հագեցնում են տիեզերքը: Օդի հոսանքներն էլ, օծված մաքրագույն բյուրակերպյան ծաղիկների և տունկերի երփներանգ զարդերով, պսակում են պայծառազարդված աշխարհը: Իսկ առաքելական ամպերի երկնքով մեկ լեռնացած բազմաճառագայթ կուտակումներն Ավետարանի ահեղ որոտմամբ, փայլակնաբորբոք հրակեզ զորությամբ, Աստուծո գիտության ողորմության անձրևն են մատռվակում մեր բնության դաշտի հովիտներում. նաև Հոգու կենդանարար օդի շունչն են տարածում բանական բույսերի բերրի աճման համար և քաղցր պտուղով վայելչացած անուշահոտ ծաղիկների վրա»<sup>11</sup>:

Ճիշտ է, տեսարանները՝ ծնակերպման առումով, իրենց լեզվաոճական մատուցումներով, շատ ընդհանրություններ ունեն, սակայն, ի տարբերություն Նարեկացու՝ Խորենացու մոտ կրկին գերիշխում է կրոնականը՝ «Այժմ ամպերը, տերունական հրամանին սպասարկելով,....», «բազմաճառագայթ կուտակումներն Ավետարանի ահեղ որոտմամբ...», «Աստուծո գիտության ողորմության

<sup>9</sup> Թամրազյան Հ., Գրիգոր Նարեկացին և նորալատոնականությունը, Երևան, 2004, էջ 222:

<sup>10</sup> Գ. Նարեկացի, նշվ. աշխատ., էջ 32: *Վարդաստանն էր շողարծակում հազարերանգ*

*Ծիծաղածուփ ծաղիկների երփնախաղով,*

*Սոսն ու տոսախն էին սփռել այնտեղ բոսոր*

*Դալարագեղ ոստերն իրենց:*

*Նոճիներն ու արոսներն նորաբողբոջ*

*Շրշում էին հկքով հուշիկ՝*

*Գզվելով վարդ ու շուշանին.*

*Շողշողում էր շուշանն հովտում,*

*Շողում էր դեմն արեգակի:*

<sup>11</sup> Մովսես Խորենացի, նշվ. աշխատ., էջ 28-29:

անծրնն են մատուցակում...»: Խորենացու ճառում ևս երկիրը «վայելչացած» պայծառակերպում է Աստծո երևման ժամանակ՝ «պսակակապ թագազարդարված, տերևազգեստ բույսերով և տունկերով ծաղկազարդված, և ծաղկավետված լեռները ծիրաներփյան ցնծում են Տիրոջ առաջ»<sup>12</sup>: Պատմահայրը մեկ քայլ ավելի առաջ է գնում իր նկարագրության հարցում՝ իհարկե, չմոռանալով կրոնական երանգը. «Անուշահոտ են դառնում նաև ճահիճները, և դալարավայրերում կենդանիների խմբերն են խայտում. և հավքերն, օդում վայելչացած երևալով, քաղցրանվագ հնչեցնում են անտառները: Իսկ մեր բանական բնության երկիրը լուսազարդված ցնծում է Աստուծո գալստյամբ՝ զարդարված մշտազվարճ առաքինության նորափետուր ծաղիկներով, և, բարձրանալով հավատքի լեռը, տոնասերներին պսակում է ոսկեճաճանչ իմաստության ծաղիկներով. և աստվածագիտության բուրումը երկնախոհների միտքն ամբողջապես լցնում է անուշահոտությամբ: Քաղվում են նաև անմահության պտուղներ՝ սրբությամբ քաղցրացնելու հոգու զգայարանները: Նաև պարում են մաքրազգեստների լուսատեսակ ասերը Եկեղեցու շուշանազարդ վայրերում և Ավետարանի քաղցրաձայնության նվագները հավքերի երգերի պես ավետալուր հնչեցնում բոլորի համար»<sup>13</sup>:

Երկու հեղինակների ստեղծագործությունների մեջ իր ուրույն տեղն է գրավում ծովը: Ե՛վ Խորենացու, և՛ Նարեկացու մոտ գույները պար են բռնել ծովի ականակիտ մակերեսին:

Ի համատարած ծովէն

պղպջէր գոյնն այն ծաղկին....<sup>14</sup>

«Այժմ ծովը, վրդովմունքի բարձրադեզ լեռնակուտակ ալիքներից հանդարտված, տերունի ոտքերի համար ընթացքի ասպարեզ է հարդարում կոհակների վրա. և գետերի հոսանքներն առավելապես տարածվում են տիեզերքով մեկ...»<sup>15</sup>: Բնության ծաղկման մեջ զգացվում է հոգու կենդանացման շունչը, իսկ այս մոտիվը գալիս է դեռևս «Հաճախապատում» ճառերից: Այստեղից Խորենացուն են անցել նաև բնության շողարձակման, լույսի պաշտամունքի, հոգևոր գարնան գաղափարները: Հոգևոր գարունը կյանքի հավիտենականությունն է խորհրդանշում: «Իսկ մեր բնության ներքին իմաստության ծովը, երբեմնի չար հողմերի անդնդապտույտ փրփրատեսակ ալիքներից հանդարտված, ի վերուստ շողացող ճառագայթներով հոգու բնության ընթացքն է ան-

<sup>12</sup> Նշվ. աշխատ., էջ 29:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 29:

<sup>14</sup> Գ. Նարեկացի, նշվ. աշխատ., էջ 30: *Եվ այդ ծովից համատարած Պղպջուն էր գույնն այն ծաղկի երփնափողփող.*

<sup>15</sup> Մովսես Խորենացի, նշվ. աշխատ., էջ 30:

վայրափակ հարդարում իր մեջ. և ավետարանական գետերի տիեզերագնաց ծավալմամբ կենաց աղբյուրից անհատաբար հորդացող անմահության հոսանքները, Աստուծո՝ մեզ երևալու պահին, պարածածկում են տիեզերքը խաղաղության ողջույնով»<sup>16</sup>:

Վարդավառն Աստծո երևալու տեսարանով հաստատում է Տիեզերքի խաղաղությունը:

Նույն օրը նաև Սուրբ Հոգին է իջնում երկիր. ցրվում է խավարը, արթնանում է բնությունը, Թաբոր լեռան վրա երևում է լույսը, որն Աստծո խորհրդանշն է. «Փրկիչը մեր բնությամբ ճառագայթեց Աստվածության Լույսը Թաբոր լեռան վրա՝ լույսի փրկական փայլումը որպես առհավատչյա թողնելով սուրբերի աստվածամանակերպ հարության համար...»<sup>17</sup>:

Խորենացին, ի տարբերություն Նարեկացու, տոնի խորհրդից զատ, իր ճառում մեկնում է նաև «վարդավառ» բառի նշանակությունը. «.... հույժ վայելուչ է տոնիս անունը, որ տալիս է Եկեղեցին, քանզի Վարդավառ է կոչում, որ, արդ, ավար է նշանակում, նաև կոչում է վարժարան: Այլ ինչո՞ւ է հույնը սա Պայծառակերպության և Պսակաց տոն անվանում, իսկ Հայաստանյայց ազգը՝ Վարդավառ. սրանք [երկուսն էլ] միևնույն հրաշափառ պայծառությունն են հնչեցնում, որ նախապես Բանն էր արձանագրել: Այս տոնին բովանդակ երկիրը ծաղկավետվել է. Մեր բնությունն էլ փթթել է հավիտենական ծաղիկներով և Քրիստոսի փառքի ճառագայթարձակ փայլմամբ, եկեղեցիները պայծառազգեստ վայելչությամբ են պսակվել, և առաքինության լուսահրաշ վարդերով ու շուշաններով տոնասերների ոսկեվարսյալ գլուխներն են վայելչացնում: Ըստ այսմ՝ հիրավի է Վարդավառ անվանում սա Եկեղեցին և Պայծառակերպության ու Պսակաց տոն»<sup>18</sup>:

Կրոնական ենթատեքստից դուրս Խորենացու մոտ տեսնում ենք նաև կենդանի բնության շարժումը և մարդկային կեցությունը: Այդպես է նաև Նարեկացու տաղում:

Խորհուրդը ևս, ինչպես և տաղը, ավարտվում է Քրիստոսի և Սուրբ Երրորդության փառքի խոսքերով. «Նրան փա՛ռք հավիտյանս հավիտենից. ամեն»<sup>19</sup>:

Այսպիսով՝ վերոգրյալից կարող ենք եզրակացնել, որ երկու հեղինակների մոտ Աստծո պայծառակերպության կամ Վարդավառի տոնը մատուցվում է

---

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 30:

<sup>17</sup> Նշվ. աշխատ., էջ 31:

<sup>18</sup> Նշվ. աշխատ., էջ 36-37:

<sup>19</sup> Նշվ. աշխատ., էջ 40:

բնության տեսարանների պատկերմամբ, մինչդեռ, եթե Նարեկացու մոտ գերիշխում է բնության գեղեցիկ նկարագրությունը և չկա ոչինչ կրոնական, բացի վերջին երկու տողից, ապա Խորենացու մոտ բնության նկարագրություններին զուգահեռ մեկնվում է նաև տոնի խորհուրդը, «վարդավառ» բառի նշանակությունը, հանգամանակից կերպով խոսվում է տոնի մասին՝ այս ամենը ներկայացնելով կրոնի, հավատի տեսանկյունից:

Եթե ստեղծագործությունների բովանդակությունից զատ անդրադառնանք նաև նրանց ձևին, ապա պարզ կլինի, որ Խորենացու մոտ խորհուրդը գրված է արծակ, իսկ Նարեկացու տաղը չափածո է, բանաստեղծական, գեղարվեստական ոճավորմամբ:

Իսկ ինչ վերաբերում է բառաֆոնդին, ապա երկուսի մոտ էլ հանդիպում են լույսի, շողերի, ճառագայթների, խավարի, ամպերի, օդի, քամու, ծաղիկների, վարդերի, շուշանների, արեգակի նկարագրության տեսարաններ, որտեղ հիշյալ երևույթները բնութագրվում են «գերապայծառ ճառագայթող լույս, նորահրաշ արփափայլ լույս, պայծառահրաշ լույս, պայծառալույս արեգակ, նորափետուր ծաղիկներ, ոսկեճաճամչներ, փայլակնացայտ, ցողաբուխ ամպեր, քաղցր պտուղ, անուշահոտ ծաղիկներ, ծաղկազարդ տունկեր, արեգակնափայլ դեմք, լուսեղեն ամպ» և այլ բազմաթիվ բառերով ու բառակապակցություններով:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ Մովսես Խորենացու «Վարդավառի խորհրդի մասին» ծառն իր անմիջական ազդեցությունն է թողել 10-րդ դարի միաստիկ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու «Վարդավառի տաղ»-ի վրա:

***Բանալի բառեր - Վարդավառ, Գրիգոր Նարեկացի, Մովսես Խորենացի, համեմատական քննություն, տոնի հեթանոսական և քրիստոնեական խորհուրդներ***

#### **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. **Գրիգոր Նարեկացի**, Տաղեր, Երևան, 1991:
2. **Դևրիկյան Վ.**, Պայծառակերպությունը և Վարդավառի տոնը, Երևան, 2006:
3. **Թամրազյան Յ.**, Գրիգոր Նարեկացին և նորալատոնականությունը, Երևան, 2004:
4. **Մկրյան Մ.**, Հայ հին գրականության պատմություն (5-10-րդ դդ.), Երևան, 1976:
5. **Մովսես Խորենացի**, Աստվածաբանական երկեր, Ս. Էջմիածին, 2007:

## ТОЖДЕСТВЕННОСТЬ “ТАГ ВАРДАВАРА” ГРИГОРА НАРЕКАЦИ С ПРОИЗВЕДЕНИЕМ “О СИМВОЛЕ ВАРДАВАРА” МОВСЕСА ХОРЕНАЦИ

**А. Э. МКРТЧЯН**

*Выпускница магистратуры  
отделения “Армянский язык и литература”  
филологического факультета ГГУ,  
Специалист отдела информации и  
по связям с общественностью ГГУ*

В статье проводятся параллели между произведениями Мовсеса Хоренаци "О символе Вардава" и Григора Нарекаци "Таг Вардава", где первое произведение послужило основой для создания "Тага Вардава".

## “CAROL VARDAVAR” PLEA OF GREGOR NAREKATCI COMPARING WITH “SYMBOLISM ON VARDAVAR” EULOGY OF MOVSES KHORENATCI

**H. E. MKRTCHYAN**

*Faculty of Philology of GSU,  
Armenian Language and Literature Department,  
Graduate of Master’s Degree,  
Specialist of the Department “Public Relations  
and Information” of GSU*

In the article parallels are drawn between the poem “The Sacrament of Vardavar” by Movses Khorenatsi and “The Verse of Vardavar” by Grigor Narekatsi, at the same time observing the first work as basis for the verse of Narekatsi.